

— Անշուշտ, Յուսիկ, դու իրեն հետ վեճ մը ունեցեր ես, կերպդ, ձեռքդ այնպես կը ցցնէ,— ըսաւ Տիկինը ծիծաղելով եւ նուրբ հայուացք մը ձգելով:

— Վեճ... ես մարդու հետ չունիմ, իշխանուհի, ուր մնաց Ատոմի հետ. բայց ճշմարիտը խօսելով ինձ շատ հաճելի է իւր սիրուն կերպարանքը, անուշ նայուածքը, քաղցր ձայնը չի լսել եւ չի տեսնել տարիներով եւ բոլոր կեանքիս մէջ, եւ եթէ կարելի է հանդերձեալ կենաց մէջ նաեւ իրեն չի հանդիպիլ, որ շատ հաւանական է:

— Թուի թէ իրեն չի հանդիպելու համար արքայութենէ նաեւ պիտի հրաժարիս:

— Մանաւանդ թէ արքայութիւն երթալու համար ամէն ջանք պէտք է ընեն անոնք, որ Ատոմ Շահունիի հանդիպիլ չեն ուզեր անդին, վասնզի հոն յայտնի է թէ իւր տեղը արքայութիւն չի կրնար լինիր:

— Ինչպէ՞ս, խեղճ Ատոմ, այդչափ գէշ համարմո՞ւնք ունիս դու իւր վրայ:

— Գէշ համարմո՞ւնք ունենալ, ո՛չ երբեք. բայց ես այնպես կը հաւատամ թէ արքայութիւն ըսուած տեղը պատերազմի դաշտ չէ, ուր մարդիկ ջարդեն, կոտորեն, հայհոյեն, հրդեհեն, այլ այնպիսի տեղ մը, ուր մարդիկ հանդարտ, սիրով, խաղաղութեամբ...

— Անշուշտ նաեւ խնայութեամբ ապրելու համար պիտի երթան,— ըսաւ իշխանուհին ծիծաղելով, եւ ամենքն սկսան խնդալ: Իսկ Յուսիկ անխռով ժպտելով՝

— Այո՛, իշխանուհի, խնայութիւն ամէն աեղ պէտք է, իսկ արքայութեան մէջ անհրաժեշտ է,— պատասխանեց,— վասնզի հոն ոչ ուտել, ոչ խմել, ոչ շինել ոչ հագնիլ եւ ոչ պատերազմիլ կայ:

— Եթէ ամենքը քու խորհրդոցդ հետեւին՝ աշխարհք արքայութիւն կը դառնա այսօր եւ վաղն անապատ:

— Ես չեմ ըսեր թէ մարդիկ չուտեն, չզգենան, չբնակին, այլ աւելորդ ծախքեր չընեն, որով շատ անգամ նեղութեան կը դատապարտուին. տեսե՛ք, ահա Կամսարականք, որ օրաուր կ'ոչնչանան, Շիրակայ մէկ մասը դեռ երեկ ծախեր են Բագրատունեաց Տիկնոջ, անշուշտ քանի մը տարիէ մնացածն էլ կը ծախեն եւ Բագրատունիք, որ ագահ անուն ունին, հայոց առաջինք կը լինին. ո՛չ քաջութեամբ, վասնզի Ատոմ Շահունիէ ո՛վ քաջ կայ. փա՛ռք ստեղծողին, ձեռքը